

**ՆԱՐԵԿԱՅԻԱԿԱՆ ՃԱՌԱԳՈՒՄՆԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Թումանյանի ստեղծագործական տեսադաշտում գրեթե մշտապես գտնվել են երկու գրական անգուգական մեծություններ՝ Շեքսպիր և Նարեկացի:

Որքան մեզ հայտնի է, Թումանյան-Նարեկացի գրական առնչության հարցն արծարծվել է ոչ այնքան հայտնաբերված համապատասխան փաստական նյութի քննության հիման վրա, որքան բավական ընդհանուր բնույթի մտտեցումով: Սույն պարագայում մեր նպատակը բավական համեստ է. ընթերցողի ուշադրությանն արժանացնել Նարեկացու «Մատյան ողբերգության» մեջ արտահայտված գրականագիտական բնույթի որոշ մտքերի, քնարական հերոսի հոգեկան աշխարհի պատկերման արձագանքներ Թումանյանի ստեղծագործություններում:

Նախ վերհիշենք, թե ժամանակակիցների կողմից ինչպիսի վկայություն կա Նարեկացու ստեղծագործության, մասնավորապես «Մատյան ողբերգության» անմահ պոեմի նկատմամբ Թումանյանի ցուցաբերած վերաբերմունքի մասին: Այս հարցում անգնահատելի կարևորություն ունի բանաստեղծի դուստր, երախտաշատ Նվարդի վկայությունը: Նա իր «Հուշեր և գրույցներ» բարձրարժեք ստեղծագործության մեջ նշում է, թե հայրը Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը մշտապես ձեռքի տակ է ունեցել, նույնիսկ որևէ տեղ հանգստանալու գնալիս դա «միշտ հետն էր տանում», այդ գրքի վրա հայրն իր դատերը «գրաբարի դասեր է տվել»:<sup>1</sup>

Համնարեղ լռեցին ի՞նչ կարծիք է ունեցել Նարեկացու գրական ժառանգության մասին: Անվանի գրականագետը, որ մենագրական ուսումնասիրության նյութ է դարձրել և՛ Թումանյանի, և՛ Նարեկացու գրական ժառանգությունը, իրավացիորեն այն միտքն է ընդգծում, որ նախքան Թումանյանն էլ Նարեկացին բարձր է գնահատվել, բայց ոչ այնպիսի խորքայնությամբ և նոր հայեցակետով, ինչպիսին թումանյանական գնահատումներն են, Նարեկացու ստեղծագործությանը վերաբերող «միանգամայն նոր և ամենաճիշտ գնահատական» Թումանյանի կողմից է տրվել:<sup>2</sup>

Ուշադրության արժանացնենք այդպիսի գնահատումներից մի երկուսը: Անդրադառնալով Վ.Բրյուսովի այն մտքին, թե հայոց բանաստեղծությունը հայ ազգի ազնվականության վկայականն է, Թումանյանը նշում է, թե «Այո՛, հիրավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքուշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել աստծո հետ երես առ երես»:<sup>3</sup> Ուրեմն Նարեկացին բարձրակետ է, զագաթ: «Ամենքը միասին» հողվածում մեր մշակույթին մատուցած ծառայության առումով Թումանյանը որոշակի ընդհանրություն է տեսնում Նարեկացու և Խ.Աբովյանի միջև: Նա «Վերք Հայաստանի» վեպում տեսնում է հայի «կրակված սիրտը, որ այրվում է երկիրը բռնած», իսկ «Մատյան ողբերգության» պոեմում զգում է հայի «տանջված հոգին, որ մոռցում է մինչև երկինք»:<sup>4</sup>

Ի դեմս Նարեկացու՝ Թումանյանը տեսնում է «ի խորոց սրտի» Աստծու հետ խոսքի բռնված մեծություն, անմահություն: Թումանյանը, որ հասարակ մահկանացու-

<sup>1</sup> Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Եր., 1969, էջ 118:

<sup>2</sup> Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1981, էջ 312:

<sup>3</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.7, Եր., 1995, էջ 219:

<sup>4</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.6, Եր., 1994, էջ 266:

ների խոսք ու զրույցն է բարձր գնահատել, դրանից դասեր ու իմաստություն է քաղել, բնական է, որ Նարեկացու և Աստծու զրույցը պիտի ընդուներ որպես կողմնորոշիչ, գրեթե անփոխարինելի նշանակություն ունեցող համալսարան, մարեկացիական խոհերը պիտի գերեին նրան, դրանք պիտի թափանցեին թումանյանական աշխարհ՝ որպես գարնանը հողի մեջ հայտնված հատիկ:<sup>5</sup>

Անցնենք բուն հարցին: Թյուրընկալումների առիթ չտալու համար անհրաժեշտ ենք համարում նախապես նշել, որ Նարեկացու և Թումանյանի ստեղծագործություններում նկատված ընդհանրություններն ամենևին էլ չենք դիտում որպես սովորական ազդեցություն: Այս հարցում կողմնորոշվում ենք թումանյանական այն դատողությամբ, որ արտահայտվել է գրական ազդեցությանը վերաբերող մի զրույցում: «Նմանությունները, - ասել է Թումանյանը, - կարելի է բացատրել հոգիների հարազատությունով, ազգակցականությունով, խոհերի նմանությունով և ոչ ազդեցություններ համարել»:<sup>6</sup>

Ինչպես Նարեկացին, այնպես էլ Թումանյանը մեծ ու խոր ներաշխարհով, բարդ խառնվածքով անհատականություն են՝ օժտված ներքին քաբուն հոգեկան աշխարհներով, ապրումների հակասականությամբ: Թումանյանին մոտիկից քաջածանոթ Դ.Դեմիրճյանը նշում է, թե «Թումանյանը շատ բարդ մարդ էր: Նրան հասկանալը շատ դյուրին բան չէ ... Թումանյանը բազմակողմանի գծերի մի կոմպլեքս էր ...»:<sup>7</sup>

Նարեկացու հոգեկան բարդ խառնվածքը, հոգեկան երկվությունը լավագույն ձևով է ներկայացնում նրա «Մատյան ողբերգության» պոեմի քնարական հերոսը, որ վերջին հաշվով ինքը Նարեկացին է:

Դեմքով միշտ ժպտում, բայց մտքով խոցված,  
Տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ,  
Արտաքուստ թեև ձևանում է շատ հանգիստ, սփռված,  
Բայց արտասուքը լուռ վկայում է կսկիծը սրտի...<sup>8</sup>

Լսենք նաև Թումանյանի «Տպավորություններ» բանաստեղծության քնարական հերոսին, որ, կարծես ձայնակցելով Նարեկացու քնարական հերոսին, իր նույնաբնույթ հոգեկան վիճակն է ներկայացնում.

Հա՛, կյանքում ես միշտ այսպես եմ եղել,  
Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ.  
Հազիվ ուզել եմ անհոգ ծիծաղել  
Եվ սրտիս խորքից հառաչել եմ «ա՛խ»:<sup>9</sup>

Թումանյանական այս քառատողի սկզբի մասում՝ *ես* բառից հետո եթե ավելացնենք *էլ* շաղկապը, կստացվի այնպես, որ ասես թե այս քնարական հերոսը ձայնակցում է առաջինին, նրան հուզող միտքն է շարունակում՝ «Հա՛, կյանքում ես էլ

<sup>5</sup> Ավելորդ չի լինի մի երկու «մանրուք» ուշադրության արժանացնելով՝ ցույց տալ, թե Հ.Թումանյանն ինչպիսի արտակարգ ուշադիր, մանրակրկիտ վերաբերմունք է ունեցել նարեկացիական տողի, բառի նկատմամբ: Նարեկացու ստեղծած «ծիծաղախիտ» բառը շուրջ հազար տարի գրեթե աննկատ էր մնում: Թումանյանն առաջինն էր, որ գեղարվեստական խոսքում գործածության մեջ դրեց այդ բառը /«Ծիծաղախիտ Վանա ծովի փոքրիկ գյուղից առափնյա Ծովն էր մտնում գաղտագողի Ամեն գիշեր մի տղա»/: Թումանյանի կողմից աննկատ չի մնացել նարեկացիական նաև «բազմաբուրեան»/բազմաբուրյան/ նորաբանությունը: Այս կապակցությամբ առավել ուշագրավն այն է, որ առանձին գոյություն չունեցող «բուրեան» /բուրյան/ ներքին /ներունակ/ նորակազմությունն առանձնացնելով՝ Թումանյանը դա գործածել է որպես ինքնուրույն բառ /«Ես ունեի թարմ ու բուրյան ծաղիկներ»:

<sup>6</sup> Թումանյան Ն., նշվ. աշխ., էջ 205:

<sup>7</sup> Մեծերը ամենամեծի մասին /Վերնատան անդամները Թումանյանին/, Եր., 1999, էջ 132:

<sup>8</sup> Նարեկացի Գ., Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմ. Վ.Գևորգյանի, Եր., 1979, էջ 185:

<sup>9</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.1, Եր., 1988, էջ 158:

միշտ այդպես են եղել...»: Այսպիսի ընդհանրությունը պայմանավորված է նույնաբնույթ աշխարհընկալումով, որ շատ է հեռու միակողմանիությունից: Իհարկե, բանաստեղծական ապրումի արտահայտման, պատկերի կերտման նմանություններ կարելի է ցույց տալ միմյանց ստեղծագործությունների հետ ոչ մի առնչություն չունեցող հեղինակների երկերում էլ: Հիշենք, թե ինչպես Թումանյանը մտադրություն է ունեցել ցույց տալ, թե ինչքան մեծ գծեր կան Մայք-Նովայի երգերի և Շեքսպիրի սոնետների մեջ: Բայց թումանյանական վերը բերած քառատողի ծագումնաբանական առնչությունը Նարեկացու համապատասխան տողերի հետ մեզ անառարկելի է թվում: Նկատի ունենանք նաև, որ Թումանյանի 1897 թվականին գրված այդ բանաստեղծությունը հեղինակի կենդանության օրոք տպագրության չի արժանացել:

Նարեկացու և Թումանյանի ստեղծագործություններում նկատված մյուս ընդհանրությունը, որն արտահայտված է ընդամենը մեկ մախադասությամբ, վերաբերում է գրականագիտական բնույթի մեկ հարցի: Նարեկացին բանաստեղծական դրսևորումով, Թումանյանը գիտական մոտեցումով կամեցել են այն միտքն արտահայտել, թե ինչպիսին է լինելու, ինչպիսին է մեծ բանաստեղծի և հասարակական միջավայրի փոխառնչությունը:

Ահա Նարեկացու համապատասխան մախադասությունը. «Ես ամենայն, և յիս ամենեցունն» /Բան ՀԲ, Բ/: Այս մախադասությունը տարբեր ձևով է թարգմանված աշխարհաբար, և հաջողվածը սա պետք է համարել. «Ես եմ համայնը, և ամենքինն է պարփակված իմ մեջ»:<sup>10</sup>

Իր «Ամենքը միասին» հոդվածում նշելով, որ Խ.Աբովյանի արձանը կանգնեցվելու է ոչ թե «երեկոներով ու հարուստների փողերով», այլ ազգի ընդհանրության նվիրաբերած միջոցներով, Թումանյանն ավելացնում է. «... կոպեկներ լինեն թող, միայն թե ամենքը զան ու մասնակցեն, որովհետև նա /Աբովյանը – Ս.Մ./ ամենքինն է, ու ամենքը նրա մեջ են»:<sup>11</sup>

Այնհայտ է Նարեկացուց վերը բերած մախադասության և Թումանյանի հոդվածից մեջբերված այս հատվածում ընդգծված արտահայտության նմանությունը մտքի դրսևորման եղանակով, մասնավորի և ընդհանուրի հարաբերության արտահայտման առումով: Երկու դեպքում էլ, ինչպես վերը նշվեց, դատողությունը վերաբերում է գեղարվեստական խոսքի մշակի և հասարակական միջավայրի՝ ժողովրդի փոխառնչությանը: «Ամենքինն է պարփակված նրա մեջ», «ամենքը նրա մեջ են», նշանակում է Նարեկացին, Աբովյանը ոչ թե նեղ անձնական դիտակետից, այլ ամենքի աչքերով են նայել աշխարհին, ամենքի սրտով են ընկալել կյանքը, զգացել ու արտահայտել են ամենքի ցավն ու երազանքը: Մա էլ Բարձրյայի կողմից մեծերին տրված շնորհ է: «Բանաստեղծը, - գրում է Թումանյանը, - նրանով է բանաստեղծ, որ ապրում է ընդհանուրով, շատերից է խոսում»:<sup>12</sup> Այս կապակցությամբ վերհիշենք Թումանյանի քառյակներից մեկի հետևյալ տողերով արտահայտված բաղձանքը. «... Ու հալվեի՛, ծավալվեի՛, ամենքի հետ լինեի»:

Վերջին ընդհանրության մասին: «Մատյան ողբերգության» ԾԲ գլխի Բ մասում փառաբանելով Քրիստոսին՝ Նարեկացին տեղ է տվել նաև այսպիսի զարմանահրաշտողների.

Եւ գոր ահաւոր է ասել,

Կարգեն աստանօր

Յիշատակ եղեալ

<sup>10</sup> Նարեկացի Գ., էջ 442:

<sup>11</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 266: Ընդգծումը մերն է:

<sup>12</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Եր., 1997, էջ 145:

Մեծիդ երախտեաց,

Աստուած իսկ լինել

Ընտրութեամբ շնորհին ...

Նարեկացիական այս տողերն էլ տարբեր ձևով են աշխարհաբարի վերածվել, բայց, կարծում ենք, դրանցից լավագույնը Վ. Գևորգյանի թարգմանությունն է.

Եվ այն, ինչ ասելն իսկ անհավոր է,

Գրում եմ այստեղ որպես հիշատակ մեծ երախտիքիդ.

Կարող ենք նույնիսկ մենք աստված լինել

Շնորհներով ու ձիրքերով ընտիր.<sup>13</sup>

Կարծում ենք մարեկացիական այս տողերով արտահայտված միտքն այնքան էլ հաջող և համարժեք ձևով չի ընկալվել և արժեքավորվել ակադեմիկոս Մ.Սկրյանի կողմից: Ահա նրա համապատասխան դատողությունները: «Կարծեք թե, - գրում է Սկրյանը, - Նարեկացին Պրոմեթեոս լինի՝ ծնված միջնադարում, որ ձգտում է ջնջել երկնքի և երկրի միջև, աստծու և մարդկանց միջև եղած տարբերությունը»:<sup>14</sup>

Սկրյանը «Աստուած իսկ լինել» արտահայտությունը դիտարկում է կյանքի և մահվան հակասությունից առաջացած ողբերգության տեսանկյունից և նշում է, թե Նարեկացին իբր մարդու «անմահության հարցը պանթեիստական ըմբռնումով է լուծում»: Մի կողմ թողնենք Նարեկացուն դեպի պանթեիզմ ձգելու հարցը, որ ամենայն հավանականությամբ ժամանակի իշխող գաղափարախոսությանը տուրք տալու արտահայտություն է: Բայց մի՞թե վերը բերած տողերում Նարեկացուն հուզողը առհասարակ հողածին արարածի աստվածանալու, անմահություն գտնելու հարցն է: Նարեկացին ոչ թե կամեցել է ջնջել «Աստծու և մարդկանց միջև եղած տարբերությունը», այլ ասել, որ հողածինն էլ կարող է աստվածանալ, բարձր կատարելության հասնել, եթե օժտված է ընտիր շնորհներով և ձիրքերով, հրաշագործ գործությամբ:

Այն համոզմանն ենք, որ վերը բերած մարեկացիական տողերով արտահայտված միտքը կարևոր ազդակ է եղել Թումանյանի համար՝ աստվածագլած կերպարի կերտման նպատակով իր կատարած որոնումների ընթացքում:

Թումանյանի նման բանաստեղծն ու մտածողը ո՛չ կարող էր փարվել այնպիսի պարզունակ մտքի, թե «մարդն իր վախճանը գտնելով՝ միաձուլվում է բնությանը՝ տիեզերքին ու դրանով անմահանում»<sup>15</sup> և ո՛չ էլ կարող էր այնպիսի համոզմունք ունենալ, թե առհասարակ ամեն մի լավ, բարի գործ կարող է անմահություն շնորհել հողածինին: Նա, որ կամենում էր «Հազարան բլբուլ» պոեմում աստվածային գործությամբ օժտված ներկայացնել երգի և բանաստեղծության խորհրդանիշ Արեգին, իր երկրորդ խմբի քառյակներում էլ աստվածացած ներկայացրեց բանաստեղծին՝ ի դեմս իրեն:<sup>16</sup>

Թումանյանի համոզմամբ բանաստեղծի անմահության ամենահավաստի գրավականը աստվածանալն է, որ նշանակում է «բարձրանալ, խորանալ, ներշնչվել խոհերով ու զգացմունքներով և ստեղծագործել»:<sup>17</sup>

Երկրորդ խմբի քառյակներում Թումանյանը ներկայանում է հենց այդպիսի բարեմասնություններով՝ որպես աստվածացած բանաստեղծ: Եթե մինչև 1919թ. գրված քառյակներում մարմնավորվել են մարդ և քաղաքացի քնարական հերոսի հոգեկան

<sup>13</sup> Նարեկացի Գ., էջ 312:

<sup>14</sup> Սկրյան Մ., նշվ. աշխ., էջ 203: Ընդգծումը մերն է:

<sup>15</sup> Սկրյան Մ., Իսահակյանի հունանիզմը, Եր., 1975, էջ 155:

<sup>16</sup> Տե՛ս Մելքոնյան Մ., Թումանյանի հոգու կենսագրությունը /քառյակաշարը որպես քնարական պոեմ/, Գլուխ, 2004:

<sup>17</sup> Թումանյան Ն., նշվ. աշխ., էջ 235:

ապրումները, ապա այդ թվականին և դրանից հետո գրված քառյակներում այդ քնարական հերոսը ներկայանում է որպես արարիչ բանաստեղծ, որի հոգու խորունկ ծալքերից, նրա ստեղծագործական կենսափորձից է դուրս բերված այդ քառյակների բովանդակությունը: Երկրորդ խմբի քառյակներում բանաստեղծն ապրում է տիեզերական կյանքով, նրա քնարական հերոսն իր ծնունդ-կյունքի օրերից սկսած այդ տիեզերական կյանքի ոլորտների հետ է առնչված:

Իմ կրնունքին, երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.

Սարը եղավ կրնքահայրս, ցողը՝ մյուռն կենսավետ,  
Ու կրնքողըս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Այսպիսի ծնունդ ունեցող բանաստեղծը, վերը բերած իր իսկ բառերով ասած, բարձրացել է, խորացել, ներշնչվել խոհերով ու զգացմունքներով և ստեղծագործել՝ մտորելով, որ «Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կրհասնեմ Նըրա մոտ...»: Եվ ի՛նչ ... բանաստեղծի երկմտությունը փարատում է հենց ինքը Աստված.

- Ի՛նչ է աճյունն էդ անկայուն, ու ամունը, որ ունես,

Գու Աստված ես, դու անհուն ես, անամուն ես ու անես...

## НАРЕКСКИЕ ВСПЛЕСКИ В МИРЕ ТУМАНЯНА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Мелконян \_\_\_

Литературное наследие выдающегося представителя армянской литературы Г.Нарекаци удостоилось особого внимания О.Туманяна. Конечно, Нарекаци высоко оценили еще до Туманяна, но не в столь глубоком и новом аспекте, как у Туманяна. В лице Нарекаци Туманян видел величие и бессмертие человека, ведущего разговор с Богом из глубины сердца. По восприятию Туманяна этот разговор наполнен не только верой, но и глубоким знанием, богатыми мыслями.

В данной статье выдвигается мысль о том, что некоторые поэтически выраженные мысли Нарекаци, которые относятся к своеобразию духовного мира поэта и его проявлениям, взаимодействию поэта и общественной среды, бессмертию поэта, нашли отголоски в туманяновском мире, играли важную ориентировочную роль.